**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/09» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի մայիսի 30-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/09-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի հուլիսի 02-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 30.05.2024թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/09-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «02» «07» 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ջուլհակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 30.05.2024թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/09-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղ, 2բ շենք, 45 բն |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00224917 |
| Հ/Հ՝ 900011005841 | Հ/Հ՝ 1510050759740100 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան | Տնօրեն՝ Գ. Ջուլհակյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |



Գ. Ջուլհակյան

**Հավելված N 1**
**« *02* » « *07* » 2024թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 3*
*« 30 » « 05 » 2024թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/09-1» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30211280/501 | Համակարգիչ ամբողջը մեկում | 70 740 000 | 70 740 000 | 70 740 000 | 70 740 000 | 70 740 000 | 70 740 000 | **70 740 000** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղ, 2բ շենք, 45 բն
ՀՎՀՀ՝ 00224917
Հ/Հ՝ 1510050759740100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Գ. Զոհրաբյան

/ստորագրություն/
Կ.Տ